ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

Պ-611²-13.05.2020-ՏՏԳԲ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Առեւտրի եւ ծառայությունների մասին» 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-134-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասը յոթերորդ պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ պարբերությունով «ավտոտրասպորտային միջոցների շուկա՝ առևտրի իրականացման վայր, որտեղ իրականացվում է ավտոտրասպորտային միջոցների առուվաճառքը.»:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը «գյուղատնտեսական արտադրանքի շուկաները,» բառերից և կետադրական նշանից հետո լրացնել. «ավտոտրանսպորտային միջոցների շուկա,» բառերով և կետադրական նշանով»:

Հոդված 3. Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը «գյուղատնտեսական արտադրանքի շուկաները,» բառերից և կետադրական նշանից հետո լրացնել «ավտոտրանսպորտային միջոցների շուկա,» բառերով և կետադրական նշանով:»:

Հոդված 4. Օրենքի 5-րդ հոդվածը լրացնել հետևյալ խմբագրությամբ՝ 11-րդ մասով.
«11. Բացի սույն հոդվածով սահմանված պահանջներից, ավտոտրանսպորտային միջոցների շուկաները պետք է բավարարեն Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած այլ պահանջները:»:

Հոդված 5.
1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունիսի 1-ից:
2. Սույն օրենքի 4-րդ հոդվածով կատարվող լրացմամբ նախատեսվող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը Հայաստանի Հանրապետության կառավարությունն ընդունում է օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

ՏԵՂԵԿԱՆՔ
ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Առեւտրի եւ ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-134-Ն ~~օրենքում լրացնել նոր Գլուխ 4.1՝~~ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասը յոթերորդ պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ պարբերությունով «ավտոտրասպորտային միջոցների շուկա՝ առևտրի իրականացման վայր, որտեղ իրականացվում է ավտոտրասպորտային միջոցների առուվաճառքը.»:

~~«ԳԼՈՒԽ 4.1~~

~~ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ~~

~~*Հոդված 15.1. Հիմնական հասկացությունները*~~

~~Սույն օրենքի իմաստով տրանսպորտային միջոցների վաճառքի եւ վարձակալության տրամադրման իրականացման հիմնական հասկացություններն են՝~~

~~տրանսպորտային միջոցների վաճառքի վայր՝ առեւտրի իրականացման հիմունքներով տրանսպորտային միջոցների տրամադրման վայր, որտեղ իրականացվում է տրանսպորտային միջոցների առուվաճառքը,~~
~~տրանսպորտային միջոցների վարձակալության իրականացման վայր՝ համապատասխան վայր, որտեղ իրականացվում է տրանսպորտային միջոցների վարձակալական հիմունքներով տրամադրում:~~

~~*Հոդված 15.2. Տրանսպորտային միջոցների վաճառքի իրականացման վայրերին ներկայացվող պահանջները*~~

~~1. Տրանսպորտային միջոցների վաճառքի գործունեությունն իրականացնում են իրավաբանական անձինք եւ անհատ ձեռնարկատերերը:~~

~~2. Տրանսպորտային միջոցների վաճառքի իրականացնող տրտեսվարող սուբյեկտները պետք է՝~~

~~1) ունենան Երեւան քաղաքի տարածքում եւ Երեւանից 30 կմ շառավիղով հեռավորության վրա, ոչ պակաս քան 8 հեկտար տարածք, իսկ մնացած տարածքներում ոչ պակաս քան մեկ հեկտար՝ սեփականության իրավունքով իրենց պատկանող կամ այլ օրինական հիմունքներով իրենց տիրապետության տակ գտնվող ասֆալտապատ տարածք.~~

~~2) տրանսպորտային միջոցների վաճառքի իրականացման վայրերի տարածքներում՝ 20 տոկոսի չափով տրանսպորտային միջոցների վաճառքի վայր այցելած զնորդների մեքենաների կայանման համար առանձնացված տարածք (այսուհետ՝ կայանման տարածք).~~

~~3) գծանշված լինի համապատասխան տրանսպորտային միջոցի չափով եւ լուսավորված: Ընդ որում, գծանշումները պետք է ենթադրեն, որ յուրաքանչյուր մեքենա ցանկացած ժամանակ ունենա ազատ ելքի եւ մուտքի հնարավորություն:~~

~~4) ունենան պայմանագրեր պահնորդական ծառայությունների հետ, կամ ունենան սեփական պահնորդական ծառայությունները, ինչպես նաեւ ամբողջ տարածքը, այդ թվում նար կայանման տարածքը պետք է կահավորված լինեն տեսահսկման համակարգերով.~~

~~3. Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից կարող են սահմանվել այլ լրացուցիչ պայմաններ:~~

~~*Հոդված 15.3. Տրանսպորտային միջոցների վարձակալության տրամադրման իրականացման վայրերին ներկայացվող պահանջները*~~

~~1. Տրանսպորտային միջոցների վարձակալության տրամադրման գործունեությունն իրականացնում են իրավաբանական անձինք եւ անհատ ձեռնարկատերերը:~~
~~2. Տրանսպորտային միջոցների վարձակալության տրամադրման իրականացման վայրերը պետք է սպահովված լինեն՝~~

~~1) վարձակալության տրամադրման համար առանձնացված տարածքով.~~

~~2) հսկիչ տեսախցիկներով կամ ունենան պայմանագրեր պահնորդական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերերի կամ իրավաբանական անձանց հետ.~~

~~3) առնվազն 10 մեքենայի համար նախատեսված կայանման տարածքով:~~

~~3. Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից կարող են սահմանվել այլ լրացուցիչ պայմաններ:~~

~~*Հոդված 15.4. Տրանսպորտային միջոցների վաճառքի եւ վարձակալության գործունեությունն իրականացնող անհատ ձեռնարկատերերին կամ իրավաբանական անձանց ներկայացվող պահանջները*~~

~~Տրանսպորտային միջոցների վաճառքի եւ վարձակալության գործունեությունն իրականացնող անհատ ձեռնարկատերերը կամ իրավաբանական անձինք պարտավոր են ծանուցել իրենց կողմից իրականցվող գործոինեության մասին «Գործունեության իրականացման ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան:~~

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը «գյուղատնտեսական արտադրանքի շուկաները,» բառերից և կետադրական նշանից հետո լրացնել. «ավտոտրանսպորտային միջոցների շուկա,» բառերով և կետադրական նշանով»:

Հոդված 3. Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը «գյուղատնտեսական արտադրանքի շուկաները,» բառերից և կետադրական նշանից հետո լրացնել «ավտոտրանսպորտային միջոցների շուկա,» բառերով և կետադրական նշանով:»:

Հոդված 4. Օրենքի 5-րդ հոդվածը լրացնել հետևյալ խմբագրությամբ՝ 11-րդ մասով.

«11. Բացի սույն հոդվածով սահմանված պահանջներից, ավտոտրանսպորտային միջոցների շուկաները պետք է բավարարեն Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած այլ պահանջները:»:

Հոդված 5.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունիսի 1-ից:

2. Սույն օրենքի 4-րդ հոդվածով կատարվող լրացմամբ նախատեսվող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը Հայաստանի Հանրապետության կառավարությունն ընդունում է օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

~~***Հոդված 2.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող վաթսուներորդ օրվանից:~~

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-611-13.05.2020,08.07.2020-ՏՏԳԲ-011/1) (Նախագիծ 1),
«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Պ-611[1]-13.05.2020,08.07.2020-ՏՏԳԲ 011/1) (Նախագիծ 2), «ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (*Պ-611[2]-13.05.2020-ՏՏԳԲ-011/1*) (Նախագիծ 3) ԵՎ «ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» (*Պ-611[3]-13.05.2020-ՏՏԳԲ-011/1)* (Նախագիծ 4) ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳՐԱՎՈՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

	ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՆԱԽԱԳԾԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	*ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ*

1.	Նիկոլայ Բաղդասարյան	««Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդված	***Շարադրել հետևյալ խմբագրությամբ*** *« **Հոդված 1.** Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 18-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակության 18.1.-ին կետով.* *«18.1) համայնքի ղեկավարի առաջարկությամբ հաստատում է համայնքի սեփականություն հանդիսացող տարածքներում այն վայրերի ցանկը, որտեղ թույլատրվում է վաճառքի և վարձույթի նպատակով կայանել ավտոտրանսպորտային միջոցները:*	Ընդունվել է	Ընդունվել է
2.	Նիկոլայ Բաղդասարյան	««Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդված	***Շարադրել հետևյալ խմբագրությամբ*** ***Հոդված 2.*** *Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 18.1.-ին կետով.* *«18.1) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն համայնքի սեփականություն հանդիսացող տարածքներում հաստատելու այն վայրերի ցանկը, որտեղ կթույլատրվի կայանել վաճառքի և վարձույթի նպատակով ավտոտրանսպորտային միջոցները, ինչպես նաեւ կարող է առաջարկել սահմանել այդ վայրերում կայանման վճարի չափը»:*	Ընդունվել է	Ընդունվել է

3.	Նիկոլայ Բաղդասարյան	««Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 3-րդ հոդված	***Շարադրել հետևյալ խմբագրությամբ*** ***Հոդված 3.*** *Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունիսի 1-ից:*	Ընդունվել է	Ընդունվել է

4.	Նիկոլայ Բաղդասարյան	«Վարչական Իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդված	***Շարադրել հետևյալ խմբագրությամբ*** ***Հոդված 1*** *Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 12-ի վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել հետևյալ խմբագրությամբ 158.1-ին հոդվածով.* *«Հոդված 158.1. Ավտոտրանսպորտային միջոցների վաճառքի վայրի կազմակերպման պահանջները խախտելը* *1. Ավտոտրանսպորտային միջոցների վաճառքի վայրի օրենսդրությամբ նախատեսված պահանջները խախտելն առևտրի իրականացման վայրի կազմակերպչի կողմից՝* *առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի քսանապատիկից մինչև քառասնապատիկի չափով:* *2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կրկին կատարվել է վարչական տույժ նշանակելու օրվանից հետո՝ մեկ տարվա*	Ընդունվել է	Ընդունվել է

			ընթացքում՝ *առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև յոթհարյուրապատիկի չափով»:*		
5.	Նիկոլայ Բաղդասարյան	«Վարչական Իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդված	***Շարադրել հետևյալ խմբագրությամբ*** ***Հոդված 2.*** *Օրենսգիրքը լրացնել հետևյալ խմբագրությամբ՝ 162.3.-րդ հոդվածով.* *«Հոդված 162.3. Վաճառքի և վարձույթի նպատակով ավտոտրանսպորտային միջոցը չսահմանված վայրում կայանելը* *1. Վաճառքի և վարձույթի նպատակով ավտոտրանսպորտային միջոցը վաճառքի և վարձույթի համար չսահմանված վայրում կայանելը՝ ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ համար՝* *առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասապատիկի չափով:* *2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կրկին կատարվել է վարչական տույժի միջոց կիրառելուց երեք օր հետո՝ մեկ տարվա ընթացքում՝* *առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի*	Ընդունվել է	Ընդունվել է

			չափով»:		
6.	Նիկոլայ Բաղդասարյան	«Վարչական Իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 3-րդ հոդված	***Շարադրել հետևյալ խմբագրությամբ*** ***Հոդված 3.*** Օրենսգրքի 119.1.-րդ հոդվածի 1-ին մասը «27-րդ մասերի),» թվից, բառից և կետադրական նշանից հետո լրացնել «158.1-ին հոդվածով, 162.3-րդ հոդվածով,», թվերով, բառերով և կետադրական նշաններով:	Ընդունվել է	Ընդունվել է

7.	Նիկոլայ Բաղդասարյան	«Վարչական Իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 4-րդ հոդված	***Շարադրել հետևյալ խմբագրությամբ*** ***Հոդված 4.*** *Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունիսի 1-ից:*	Ընդունվել է	Ընդունվել է

8.	Նիկոլայ Բաղդասարյան	««Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդված	***Շարադրել հետևյալ խմբագրությամբ*** *«**Հոդված 1.** Առեւտրի եւ ծառայությունների մասին» 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-134-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասը յոթերորդ պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ պարբերությունով «ավտոտրասպորտային միջոցների շուկա՝ առևտրի իրականացման վայր, որտեղ իրականացվում է ավտոտրասպորտային միջոցների առուվաճառքը»:*	Ընդունվել է	Ընդունվել է

9.	Նիկոլայ Բաղդասարյան	««Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդված	***Շարադրել հետևյալ խմբագրությամբ*** ***Հոդված 2.*** *Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը «գյուղատնտեսական արտադրանքի շուկաները,» բառերից և կետադրական նշանից հետո լրացնել. «ավտոտրանսպորտային միջոցների շուկա,» բառերով և կետադրական նշանով։»:*	Ընդունվել է	Ընդունվել է
10.	Նիկոլայ Բաղդասարյան	««Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 3-րդ հոդված	***Շարադրել հետևյալ խմբագրությամբ*** ***Հոդված 3.*** *Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը «գյուղատնտեսական արտադրանքի շուկաները,» բառերից և կետադրական նշանից հետո լրացնել «ավտոտրանսպորտային միջոցների շուկա,» բառերով և կետադրական նշանով։»:*	Ընդունվել է	Ընդունվել է

11.	Նիկոլայ Բաղդասարյան	««Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 4-րդ հոդված	***Շարադրել հետևյալ խմբագրությամբ*** ***Հոդված 4.*** *Օրենքի 5-րդ հոդվածը լրացնել հետևյալ խմբագրությամբ՝ 11-րդ մասով.* *«11. Բացի սույն հոդվածով սահմանված պահանջներից, ավտոտրանսպորտային միջոցների շուկաները պետք է բավարարեն Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած այլ պահանջները:»:*	Ընդունվել է	Ընդունվել է
12.	Նիկոլայ Բաղդասարյան	««Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 5-րդ հոդված	***Շարադրել հետևյալ խմբագրությամբ*** ***Հոդված 5.*** *1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունիսի 1-ից:* *2. Սույն օրենքի 4-րդ հոդվածով կատարվող լրացմամբ նախատեսվող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը Հայաստանի Հանրապետության կառավարությունն ընդունում է օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում:*	Ընդունվել է	Ընդունվել է

13.	Նիկոլայ Բաղդասարյան	««Գործունեության իրականացման ծանուցման մասին» (*Պ-611³-13.05.2020-ՏՏԳԲ-011/1)* ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծը	Նախագիծը հանվել է փաթեթից	Ընդունվել է	Ընդունվել է